ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

ՄԱՐԶՊԵՏ

<<24 >> << օգոստոս>> 2016 թ N 77

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի » 2-րդ կետի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Արման Հովհաննիսյանի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2016 թվականի օգոստոսի 24-ից Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Քարագլխի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Արման Հովհաննիսյանին, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2. Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ